ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հոկտեմբերի 2026 թվականի N 3059-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑԻ N 23/24 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 198,33 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 114,54 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ, 87,39 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի N 23/24 հասցեի հողամասի հարևանությամբ 198,33 (մեկ հարյուր իննսունութ ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ն ինքնակամ կառուցվել է 114,54 (մեկ հարյուր տասնչորս ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 87,39 (ութսունյոթ ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Էդգար Սամվելի Կյուրեղյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշման 3-րդ կետի, 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող N 2026CG7PUV տեղեկանքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի N 23/24 հասցեի հողամասի հարևանությամբ 198,33 (մեկ հարյուր իննսունութ ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը և դրա վրա ինքնակամ կառուցված 114,54 (մեկ հարյուր տասնչորս ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 87,39 (ութսունյոթ ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված բնակելի շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Էդգար Սամվելի Կյուրեղյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Էդգար Սամվելի Կյուրեղյանի կողմից լիազորված անձ Կարեն Մխիթարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, քաղաք Գյումրի